

**ԲԱՆԱԿՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀԱՆԴԻՊՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՂՈՐԴՄԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԲԱՆԱԿՈՐ ԽՈՍՔՈՒՄ**

Գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց գնալով կարևորվում է թարգմանության դերը: Չնայած այս հանգամանքին, թարգմանության և, մասանվորապես, բանավոր թարգմանության մեխանիզմները դեռևս խորությամբ ուսումնասիրված չեն: Հատկապես շատ քիչ է ուսումնասիրված բանավոր թարգմանության տարատեսակներից մեկը՝ հաջորդական թարգմանությունը: Թարգմանության այս տեսակը համաժամանակյա թարգմանության նկատմամբ ունի իր անհերքելի առավելությունները, քանի որ այն թույլ է տալիս ասվածը ներկայացնել ամենայն ճշգրտությամբ, ինչը հատկապես կարևոր է, երբ խոսքը վերաբերում է թվերին, քիչ ժանոթ հատուկ անուններին, ինչպես նաև ընդհանուր իմաստ արտահայտող բառերին: Ակնհայտ է, որ հաջորդական թարգմանությունն իրականացվում է այն դեպքերում, երբ թարգմանության մյուս ձևերը արդյունավետ չեն:

Հաջորդական թարգմանությունն իրավամբ կարելի է դիտարկել որպես տեղեկատվության հաղորդման տեսակներից մեկը, որն ընդհանուր առմամբ ներառում է հետևյալ բաղադրիչները՝

- ա. տեղեկատվության աղբյուր /հաղորդը,
- բ. ելակետային հաղորդում,
- գ. հաղորդումը կոդավորող,
- դ. կապի աղբյուր /միջոց/,
- ե. ապակոդավորող,
- զ. ելքային հաղորդում:

Ի տարբերություն համաժամանակյա թարգմանության՝ հաջորդական թարգմանության ընթացքում ելակետային և ելքային հաղորդումների միջև բավականին ժամանակ է ընկած: Սա այն ժամանակահատվածն է, որը պահանջվում է հոետորից խոսքն ավարտելու համար:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ժամանակային առումով հաջորդական թարգմանությունը բաժանվում է երկու փուլի՝

ա. փուլ, որի ընթացքում հոետորը խոսում է, իսկ թարգմանիչն ամրագրում է վերջինիս խոսքն իր գրառումներում: Հետաքրքրական է, որ հենց այս փուլում են հանդես գալիս հաղորդման գործընթացի բոլոր բաղադրիչները,

բ. երկրորդ փուլի ընթացքում թարգմանիչը հիմնվելով գրառումների վրա ձևակերպում է ելքային հաղորդումը:

Հաջորդական թարգմանության հետ կապված՝ մեզ հատկապես հետաքրքրում է ելակետային հաղորդման ընկալման մեխանիզմը: Այս առումով չենք կարող չանդադրադադար հնչերանգին, որը թույլ է տալիս ասույթում առանձնացնել հիմնականը և գլխավորը: Խոսքի տեմպից և ծայրի բարձրությունից է կախված նաև այն, թե ինչ ծավալի լրացուցիչ տեղեկատվություն է հաղորդվում:

Լրացուցիչ տեղեկատվությունն առաջին հերթին կարող է հաղորդվել այն գործոնների միջոցով, որոնք բնորոշ են բանավոր խոսքին՝ իրավիճակի առկայություն, ներքին շփում, ինչը հնարավորություն է տալիս խոսքը լրացնել ժեստերով, դիմախսադով: Այն պայմանավորված է նաև նրանով, թե լսողն ինչպես է ընկալում ասվածը՝ իսկ վերջինս խոսքն ընկալում է տոնի, տեմբրի, դադարների, ծայրի բարձրության, ժամանակի մեջ բաշխման միջոցով: Անգամ այն դեպքում, երբ լսողի կողմից նշված գործոններից ոչ բոլորն են անմիջականորեն ընկալվում՝ դրանք օբյեկտիվորեն գոյություն ունեն և լրացուցիչ տեղեկատվություն են պարունակում:

Իրավիճակի և ներքին շփման առկայությունը հատկապես բնորոշ է երկխոսությանը /համաժամանակյա թարգմանություն/, մինչդեռ, մենախոսությունը /հաջորդական թարգմանություն/ շատ հատկանիշներով նման է գրավոր խոսքին, սակայն, ի տարբերություն վերջինիս ծայրի միջոցով բավականին տեղեկատվություն է հաղորդվում: Վ.Ա. Արտեմևը, որը հատկապես զբաղվել է հնչերանգի ուսումնասիրությամբ գրում է. «...հնչերանգը միջոց է, որով նախադասությունը վերածվում է արտահայտության՝ հանդիսանալով հաղորդակցման գործընթացի լեզվական միջոցներից մեկը»:

Հնչերանգի միջոցով ենք նաև դատում, թե որն է ասույթի հիմնական իմաստը, որքանով է ասվածը հավանական, կատեգորիկ կամ խնդրաշատ: Վերջինիս միջոցով ենք որոշում ասույթի ավարտունության կամ անավարտության մասին:

Հաջորդական թարգմանության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նյութը ներկայացվում է մեկ անգամ, ուստի, չափազանց կարևոր է վերջինիս ճիշտ ընկալումը: Այն, առաջին հերթին, կախված է խոսքի ռիթմից, ինչպես նաև էական կամ հիմնական իմաստն արտահայտող բառերից: Ինչպես Ա. Դելակրուան է նշում. «Շատ հաճախ արտահայտությունը մնում է օդից կախված և անորոշ, քանի դեռ չի հայտնվել այն բառը, որին սպասում են որպես իմաստային հենակետ, որը միանգամից լույս է սփռում ամբողջ ասվածի վրա»:

Ըստ Ա.Ա. Սմիրնովի, ասվածը հասկանալու լավագույն եղանակներից մեկը «իմաստային հենակետերի առանձնացումն է, որոնք պարունակում են հիմնականը, էականը, կարևորը»:

Հարց է ծագում, թե արդյոք հիմնական իմաստակիրների առանձնացումը չի՞ բերում տեղեկատվության էական կորստի: Վ. Տունկելն ուսումնասիրել է այս խնդիրը և եկել այն եզրակացության, որ թարգմանության ընթացքում կորուստներն այնքան էլ էական չեն / ("Передача речи"; 1959; 178 էջ) իր փորձերի հիման վրա նա եզրակացնում է, որ թարգմանելիս բառերի մոտ 50% կորուստ է տեղի ունենում/: Սակայն, ըստ մար, դրանք չեն անդրադառնում տեղեկատվության վրա այն առումով, որ քիչ թվով բառերով ևս հնարավոր է արտահայտել միտքը կամ տեղեկատվություն հաղորդել:

Հիմնական իմաստակիրների կամ էլակետային բառերի թվին են պատկանում, առաջին հերթին, նախադասության ենթական և ստորոգյալը, պրեցիզիոն (precision) բառերը և թվերը: Այս ամենով պայմանավորված՝ կիրառվող գրառումների տարբեր համակարգերը, ընդհանուր առմամբ, բաժանվում են երեք խմբի՝

ա. հիմնական իմաստակիր միավորների առանձնացում;

բ. պրեցիզիոն (precision) բառերի գրառում /հատուկ անուններ, ամսանուններ, շաբաթվա օրերի անուններ/;

գ. թվերի գրառում /ամսաթիվ, տարեթիվ/:

Սակայն, որպես կանոն, բոլոր հաջորդական թարգմանիչներն էլ իրենց գրառումներում հավասարապես հենվում են նշված երեք համակարգերի վրա:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սխալ թարգմանության դեպքերն ավելի շատ են օտար լեզվից մայրենիին թարգմանելիս: Մայրենի լեզվից թարգմանելիս հանդիպող սխալները հիմնականում սխալ գրառումների հետևանք են /թարգմանիչը չի կարողացել առանձնացնել հիմնական իմաստակիր բառերը/: Հատկապես հաճախ են խնդիրներ ծագում այսպես կոչված պրեցիզիոն (precision) բառերի հետ կապված: Պրեցիզիոն բառերի թվին են պատկանում մի կողմից թվականները և հատուկ անունները, մյուս կողմից օրերի անունները, ամսանունները և այլն:

Հատուկ անունները բավականին ընդգրկում են և ներկայացնում են տարբեր ոլորտներ և համակարգեր՝ աշխարհագրական անուններ, քաղաքական գործիչների, գիտնականների, զինվորական գործիչների, արվեստագետների և այլ անուններ: Սրանց հետ կապված խնդիրների հիմքում ընկած է սխալ գրառումը: Փորձը ցույց է տալիս, որ հիմնականում ճիշտ են կողավորվում թարգմանչին ծանոթ անունները՝ Լոնդոն, ԱՄՆ և այլն: Անծանոթ անունները,

որոնք վերջինս առաջին անգամ է լսում, որպես կանոն թարգմանության ժամանակ խեղաթյուրվում են:

Իր «Синхронный перевод с русского на английский» գրքում Լինն Վիսոնը որոշ վիճակագրական տվյալներ է մեջբերում՝ ներկայացնելու համար խնդրի բարդությունը: Մասնավորապես, նա նշում է, որ հետազոտությունների մեկի ժամանակ չորս անժամոթ անուն սխալ էր ընկալվել և հաղորդվել հետազոտությանը մասնակցող թարգմանիչներից 80/100%-ի կողմից:

Անշուշտ, եթե խոսքը վերաբերում է ԱՊՀ անդամ երկրներին՝ բնական է, թարգմանիչը պարտավոր է իմանալ դրանց անունները: Սակայն նա կարող է և չիմանալ, թե օր. ով է Ղրղզստանի տրանսպորտի նախարարը:

Նման դեպքերում թարգմանիչը հույսը դնում է իր հիշողության վրա, այսինքն տեղի է ունենում բառի լոկ ծայնային ընկալում, որը կարող է և սխալ լինել: Հատուկ անունները, մասնավորապես անձնանունները, չպետք է փոխարինվեն օտար լեզվի համարժեքներով՝ օր. Պետրոս – Peter:

Այն դեպքերում, երբ աշխարհագրական անուններն անգլերենում կամ հայերենում իրենց համարժեքներն ունեն՝ թարգմանելիս պետք է կիրառվեն համարժեքները՝ Siberia – Սիբիր:

Երկրների անունները պետք է ճիշտ թարգմանվեն, քանի որ կարող են քաղաքական խնդիրների առաջացման պատճառ հանդիսանալ՝ օր. South Caucasus – Հարավային Կովկաս և Southern Caucasus – Կովկասի հարավային մաս: Անհրաժեշտ է իմանալ նաև հաճախ հանդիպող և կարևորություն ներկայացնող միջազգային կազմակերպությունների անունները՝ օր. the World Bank: Այս առումով առանձին դժվարություն են ներկայացնում հապավումները:

Մասնավորապես հայերենում հապավումների մի մասն է ծանոթ և լայնորեն օգտագործվում՝ օր. OSCE - ԵԱՀԿ, մինչդեռ՝ USAID - ԱՄՆՄԶԳ:

Բազմաթիվ խնդիրներ են ծագում նաև ամսանունների և շաբաթվա օրերի անունների հետ կապված՝ եթե դրանք հերթականությամբ չեն հաջորդում միմյանց: Որպես կանոն, անսխալ են թարգմանվում այն անունները կամ թվերը, որոնք թարգմանիչը մտովի կապում է որևէ նշանակալի իրադարձության հետ:

Թվերը թարգմանչի համար երկակի դժվարություն են ներկայացնում:

Առաջին հերթին մարդու ֆիզիոլոգիական հնարավորությունները սահմանափակում են մեծ թվով թվականների հիշելու հնարավորությունը:

Երկրորդ, թվականների մտապահումը լուրջ խնդիր է անգամ փորձառու թարգմանիչների համար, քանի որ թվականներ մտապահելու կարողությունը կախված չէ նրանից, թե որքան լավ է թարգմանիչը տիրապետում տվյալ լեզվին:

Որպես կանոն, մարդիկ հաշվում կամ թվաբանական գործողություններ են կատարում մայրենի լեզվով: Անգամ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, լրտեսության մեջ կասկածվողներին ստիպում էին բարձրաձայն թվաբանական հաշվարկներ կատարել, քանի որ նման դեպքերում մարդիկ իրենցից անկախ անցնում էին մայրենի լեզվին՝ մատենելով իրենց ազգությունը:

Թվերը ճիշտ և արագ թարգմանելու համար հարկավոր է դրանք գրի առնել: Թերևս խնդրի բարդությամբ է պայմանավորված այն հանգամանքը, որ որոշ տեսաբաններ առաջարկում են թարգմանության ժամանակ դուրս թողնել թվականները: Սա սխալ մոտեցում է, քանի որ թվականներն իրենց կարևորության աստիճանով կարող են տարբեր լինել:

Թարգմանության ժամանակ կարևոր է նաև խոսքն ամբողջությամբ լսելը, քանի որ թարգմանիչը նախապես չի կարող իմանալ թիվը երկնիշ է, թե եռանիշ և այլն: Նման խնդիրները մեղմացնելու կամ հաղթահարելու նպատակով՝ առաջարկվում են մի շարք վարժություններ՝

ա. թվականների

բ. ամսանունների

գ. շաբաթվա օրերի անունների

դ. հասարակական, քաղաքական և այլ գործիչների անունների /ընտրվում են ամենից հաճախ հանդիպող անունները, ինչպես նաև նրանք, որոնց արտահանությունը օտար լեզվում և մայրենի լեզվում տարբեր է՝ Mozart – Մոցարտ/, ե. աշխարհագրական անունների /ընտրվում են ամենից հաճախ հանդիպող անունները, ինչպես նաև նրանք, որոնց արտասանությունը օտար լեզվում և մայրենի լեզվում տարբեր է՝ Brussels – Բրյուսել, Edinburg -էդինբուրգ և այլն/, գ. ազգային իրողությունների անունների օգտագործմամբ / the Houses of Parliament, Hyde Park, Scotland Yard և այլն: Անշուշտ, անհնար է նման անունների ամբողջական ցանկ կազմել, սակայն կարելի է ընտրել ամենից հաճախ հանդիպող քառասունը/ :

Հաջորդական թարգմանության դասերին կատարվող վարժությունները կարող են տարբեր լինել՝

ա. ըստ նպատակի դրանք կարող են լինել ռեցեպտիվ-ռեպրոդուկտիվ,

բ. ըստ կատարման ձևի՝ բանավոր-գրավոր,

գ. ըստ կատարման տեղի՝ դասարանային, լինգվաֆոնային, տնային, թարգմանություն դաիլիճում /ուսանողական գիտաժողովներ/,

դ. ըստ կարողությունների և հմտությունների ձևավորման՝ լեզվական-խոսքային:

Հատկապես մեծ ուշադրություն է հատկացվում լեզվական և խոսքային արդյունավետ գործունեությունը զարգացնող վարժություններին: Գտնում ենք, որ այս նպատակով լսարանում լայնորեն կիրառվող հարց-պատասխան վարժությունները բավարար չեն և դրանց զուգահեռ պետք է կատարվեն նաև լեզվական և իմաստային և, կամ, իմաստային հեմարաններով վարժություններ:

Լեզվական վարժությունների նպատակը լեզվական հմտությունների ձևավորումն է, մինչդեռ, խոսքային վարժությունների նպատակն է զարգացնել ուսանողի կամ ապագա թարգմանչի խոսքային կարողությունները:

Լեզվական վարժությունների մի մասը կրում է ստեղծագործական բնույթ՝ թարծարացնելով ուսանողների մտավոր ակտիվությունը և նյութի յուրացման արդյունավետությունը:

Բանավոր թարգմանության դասերին լեզվական ռեպրոդուկտիվ վարժություններից ամենից հաճախ կիրառվողներն են՝ կրճատում (compression), փոխակերպում (transformation): Ռեցեպտիվ-լեզվական վարժություններից հատկապես արդյունավետ են՝ խմբավորում, կապակցում, կոահում, թարգմանություն:

Նմանատիպ վարժությունները թույլ են տալիս հիմնականում հաղթահարել ծագած դժվարությունները, սակայն, ինչպես արդեն նշվեց, նույնիսկ ամենից փորձառու թարգմանիչներն ապահովագրված չեն սխալներից, հատկապես երբ խոսքը վերաբերում է պրեցիզիոն (precision) բառերին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Р.К. Миньяр Белоручев; Последовательный перевод. Воениздат, 1969
2. W. Kaiser; Selection and training of conference Interpreters. 1987
4. Линя Виссон; Синхронный перевод с русского на английский. "Р.Валент", 1999
5. Մ.Գ. Աստվածատրյան; Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա. Եր., Լույս, 1985թ.